Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 14.11.2022 թվականի որոշման
Գործում է 18.11.2022 թվականից

“Ազգային հիփոթեքային ընկերություն” ՎՎԿ ՓԲԸ-ի “Հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման” կարգի շրջանակներում տրամադրվող հիփոթեքային վարկեր

1.	**Վարկի հիմնական պայմաններ**	
1.1	Վարկառուի եկամուտներ	• Առաջնային եկամուտներ (պարտադիր)- հաշվի է առնվում 100% • Երկրորդային եկամուտներ (ոչ պարտադիր)- հաշվի է առնվում առավելագույնը 60%
1.2	Արժույթ	ՀՀ դրամ
1.3	Տարեկան անվանական տոկոսադրույք	• Անշարժ գույքի կառուցապատում և ձեռքբերում ՝ 12% • Անշարժ գույքի վերանորոգում՝ 12%
1.4	Տարեկան փաստացի տոկոսադրույք [1]	12.9%-20.6%
1.5	Ձեռք բերվող բնակելի անշարժ գույքի առավելագույն արժեք	Ձեռքբերման վարկերի դեպքում անշարժ գույքի ձեռքբերման և գնահատման շուկայական արժեքի առավելագույն չափը կազմում է 55 մլն ՀՀ դրամ
1.6	Կանխավճար	• Ձեռքբերվող անշարժ գույքի գրավադրմամբ դեպքում՝ նվազագույնը ձեռքբերվող անշարժ գույքի արժեքի 30%, • Ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի գրավադրման, ինչպես նաև չվճարված կանխավճարի ապահովագրության կնքման դեպքում*՝ նվազագույնը ձեռք բերվող անշարժ գույքի արժեքի 10%
1.7	Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	• Ձեռքբերվող անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ 70% • Ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի գրավադրման դեպքում առավելագույնը ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի գնահատված արժեքների հանրագումարի 70%, բայց որ ավել, քան ձեռքբերվող անշարժ գույքի արժեքի 90%
1.8	Ժամկետ	• Անշարժ գույքի կառուցում և ձեռքբերում 120-ից 240 ամիս • Անշարժ գույքի վերանորոգում 60-ից 120 ամիս
1.9	Վարկի և տոկոսագումարների մարման եղանակ	Ամենամսյա հավասարաչափ կամ անուիտետային
1.10	Վարկի նվազագույն գումար	1,000,000 ՀՀ դրամ
1.11	Վարկի առավելագույն գումար	**Անշարժ գույքի կառուցապատում՝** առավելագույնը 35,000,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել քան • Կառուցապատման աշխատանքների կատարման նախահաշվի գումարի 80%, և • Կառուցվող ր լրացուցիչ անշարժ գույքերի գնահատված արժեքների հանրագումարի 70%, **Անշարժ գույքի վերանորոգում՝** առավելագույնը անշարժ գույքի արժեքի 60%, բայց ոչ ավել քան 20,000,000 ՀՀ դրամ **Գոյություն ունեցող անշարժ գույքի ձեռքբերում՝** ձեռքբերվող բնակելի անշարժ գույքի դեպքում՝ ձեռքբերվող բնակելի անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքի 70%, բայց ոչ ավել քան 35,000,000 ՀՀ դրամ -Ձեռքբերվող և լրացուցիչ անշարժ գույքերի գրավադրման դեպքում՝

[1] Կանխավճարի ապահովագրությունը կատարվում է այն դեպքում, երբ վարկ/գրավ (LTV) հարաբերակցությունը գերազանցում է 70%: Վարկ/գրավ (LTV) հարաբերակցության 70%-ը գերազանցելու դեպքում, կանխավճարի ապահովագրությունը կատարվում է գերազանցված գումարի տարբերության չափով:

		առավելագույնը ձեռքբերվող և լրացուցիչ բնակելի անշարժ գույքերի գնահատված շուկայական արժեքների հանրագումարի 70%: Վարկի գումարը չի կարող գերազանցել ձեռքբերվող բնակելի անշարժ գույքի գնահատված շուկայական և ձեռքբերման արժեքներից նվազագույնի 90% **Կառուցվող /անավարտ/ անշարժ գույքի ձեռքբերում՝** Առավելագույնը 35,000,000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել, քան կառուցվող /անավարտ/ անշարժ գույքի և լրացուցիչ անշարժ գույքի դեպքում՝ առավելագույնը կառուցվող /անավարտ/ բնակելի անշարժ գույքի և լրացուցիչ անշարժ գույքի գնահատված շուկայական արժեքների հանրագումարի 70%: Վարկի գումարը չի կարող գերազանցել կառուցվող /անավարտ/ բնակելի անշարժ գույքի գնահատված շուկայական և ձեռքբերման արժեքներից նվազագույնի 90%, ինչպես նաև կառուցապատողի հետ կնքված գնման իրավունքի պայմանագրով/առկայության դեպքում/ սահմանված անշարժ գույքի գնի և կառուցապատողին վճարված կանխավճարի տարբերության չափից **Բանկի հետ չհամագործակցող կառուցապատողների դեպքում /անհրաժեշտության դեպքում՝ Բանկի պահանջով լրացուցիչ գույքի գրավադրում/՝** -կառուցվող /անավարտ/ բնակելի անշարժ գույքի ձեռքբերում՝ առավելագույնը կառուցվող անշարժ գույքի՝ կառուցապատողի հետ կնքված գնման իրավունքի պայմանագրով սահմանված գնի առավելագույնը 70%
1.12	Վարկավորման այլ պայմաններ	Վարկի գումարը՝ 35,000,001 ՀՀ դրամ - 60,000,000 ՀՀ դրամ Վարկի տոկոսագումար՝ Տարեկան անվանական 13% Սույն կետով սահմանված պայմանների դեպքում OTI գործակիցը սահմանվում է 50% Ձեռք բերվող անշարժ գույքի ձեռքբերման և գնահատված շուկայական արշեքի առավելագույն չափ՝ 90,000,000 ՀՀ դրամ
1.13	Վարկի տրամադրման եղանակ	Միանվագ, փուլային, անկանխիկ
1.14	Վարկի վաղաժամկետ մարում	Թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չեն կիրառվում
2.	**Բանկի միջնորդավճարներ**	
2.1	Դիմում հայտի ուսումնասիրության միանվագ միջնորդավճար	Չի սահմանվում
2.2	Վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար (գանձվում է տրամադրման պահին)	0.5%, ոչ ավել քան 100 000 ՀՀ դրամ
3.	**Վարկառուին/համավարկառուին ներկայացվող պահանջներ և պայմաններ**	
3.1	Վարկառու/ Համավարկառու	• 18 տարին լրացած ՀՀ քաղաքացի, ում եկամուտների հիմնական աղբյուրը գտնվում է ՀՀ-ում Համավարկառուն/ները պետք է լինի/են վարկառուի ընտանիքի անդամ: Միևնույն ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, ողբայրը, որոխաները, քրոջ, եղբոր ամուսինն ու երեխաները
3.2	Վարկային պատմության ներկայացվող պահանջներ	• Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող վարկային պարտավորությունները չպետք է լինեն ժամկետանց և/կամ դասակարգված որպես չաշխատող • Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող երաշխավորության ռիսկի դասը պետք է լինի ստանդարտ

		դասակարգված • Վարկի տրմադրման որոշումը կայացնելու պահին գործող երաշխավորությունները չպետք է լինեն ժամկետանց և/կամ դասակարգված որպես չաշխատող • Վերջին 12 ամիսների (գործող և մարված) վարկերի ժամկետանց օրերի գումարային քանակը չպետք է գերազանցի 30 օրացույցային օրը • Եթե վարկառուի մեկ վարկի գծով չվճարված պարտավորության չափը չի գերազանցում 1,000 /մեկ հազար/ ՀՀ դրամը, ապա տվյալ վարկը ժամկետանց չի համարվում
3.3	Գրավատու	Ձեռք բերվող անշարժ գույքի դեպքում՝ վարկառուն և/կամ համավարկառուն, այլ անշարժ գույքի /լրացուցիչ գրավի/ դեպքում՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ
4.	**Գրավի գնահատում և ապահովագրություն**	
4.1	Գրավի արժեքի գնահատում	Գնահատումը պետք է իրականացվի Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող Ընկերության կողմից
4.2	Ապահովագրություն	• Անշարժ գույքի գրավի ապահովագրություն – պարտադիր • Դժբախտ պատահարներից ապահովագրություն- պարտադիր Ապահովագրումը իրականացվում է տարեկան կտրվածքով, բացառապես Բանկի հետ համագործակցող Ընկերությունների կողմից: Անշարժ գույքի գրավի և դժբախտ պատահարներից ապահովագրական գումարները հաշվարկվում են վարկի մնացորդային գումարի նկատմամբ:
5.	**Լրացուցիչ պայմաններ**	
5.1	Դիմում-հայտի մերժումը	• Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր • «ԱՔՌԱ» վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը ունի բացասական վարկային պատմություն: • Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ հաճախորդը վարկունակ չէ: • Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի է դարձել հաճախորդի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկությունը:
5.2	**Վարկառուի կողմից վարկային պարտավորությունների չկատարման դեպքում**	• ***Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով,*** • ***Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝*** ***1) Տույժ/տուգանքներ*** ***2) Տոկոսագումարներ*** ***3) Մայր գումար*** • ***Վարկը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով,***
		ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 7 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

		ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՋ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:
		Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու:
		Գրավադրված անշարժ գույքի վրա բռնագանձում տարածելու դեպքում, իրացումից սպացված գումարի հաշվին գրավով ապահովված պահանջն ամբողջությամբ չբավարարվելու դեպքում տարբերությունը բռնագանձվում է վարկառուի այլ գույքից:
5.3	Հաճախորդի այլ ծախսեր	✓ Գրավի գնահատման հետ կապված ծախսեր (15,000-25,000 ՀՀ դրամ) համաձայն Բանկի հետ համագործակցող գնահատող ընկերությունների կողմից սահմանված սակագների ✓ Նոտարական ձևակերպման հետ կապված ծախսեր (15,000-25,000 ՀՀ դրամ) ✓ Կադաստրային ձևակերպման հետ կապված ծախսեր՝ իրավունքի պետական գրանցում (բնակարանի ձեռքբերման դեպքում՝ 72,000-73,000 ՀՀ դրամ, մնացած դեպքերում՝ 27,000-28,000 ՀՀ դրամ) ✓ Միասնական տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ ✓ Հրդեհից և այլ վտանգներից գույքի ապահովագրության հետ կապված ծախսեր՝ վարկի մնացորդային գումարի 0,15% (համաձայն Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից սահմանված սակագների): ✓ Դժբախտ պատահարներից ապահովագրության հետ կապված ծախսեր՝ վարկի մնացորդային գումարի 0,15 % (համաձայն Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների կողմից սահմանված սակագների) ✓ Կանխավճարի ապահովագրության առկայության դեպքում՝ կանխավճարի մնացորդային գումարի չափով (համաձայն Բանկի հետ համագործակցող Ընկերությունների կողմից սահմանված սակագների)
5.4	Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ	Մինչև 7 աշխատանքային օր
5.5	Վարկի ձևակերպման վայր	Բանկի Գլխամասային գրասենյակում և բոլոր մասնաճյուղերում
5.6	Այլ պայմաններ	Կազմակերպության հետ համագործակցության պայմանագրի շրջանակներում հատուկ պայմանավորվածությունների առկայության դեպքում, կարող են սահմանվել վարկավորման այլ պայմաններ և սակագներ

Վարկի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթեր

Փաստաթղթերի ցանկ	**Հաճախորդից պահանջվող փաստաթղթեր**	**Համավարկառու-(ներ)ից պահանջվող փաստաթղթեր**
Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ)	✓	✓
Սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից (նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում՝ չի պահանջվում)	✓	✓
Վարկառուի ընտանեկան վիճակը հաստատող փաստաթղթերի /ամուսնության վկայական, ամուսնության պայմանագիր, ամուսնալուծության վկայական և այլն/ (առկայության դեպքում)	✓	✓
Վարկառուի հետ բնակվող/խնամակալության տակ գտնվող անձանց անձնագրերի/ծննդյան վկայականները	✓	-
Եկամուտների մասին տեղեկանք հիմնական գործատուի կողմից	✓	✓
Զբաղվածության մասին տվյալներ (ներկայում զբաղեցրած պաշտոնը, տվյալ կազմակերպությունում աշխատանքի ստաժը) և տվյալներ նախկին զբաղվածության մասին (գործատուն, զբաղեցրած պաշտոնը, յուրաքանչյուր կազմակերպությունում աշխատանքի ստաժը)	✓	✓

Երկրորդային եկամուտի ապացույցներ /առկայության դեպքում/	✓	✓
Աշխատանքային պայմանագրի պատճեն	✓	✓
Գտնվող անշարժ գույքի ծագումն ու դրա նկատմամբ սեփականության, ինչպես նաև այլ իրավունքներ հաստատող վկայական, փաստաթղթեր	✓	-
Անշարժ գույքի վաճառողի անձնագրի, սոց. քարտի և ամուսնության վկայականի պատճենները	✓	
Անկախ գնահատողի կողմից կատարված գույքի գնահատման հաշվետվություն	✓	-
Այլ փաստաթղթեր՝ Բանկի պահանջով	✓	✓
Վարկի տրամադրման որոշում կայացնելուց հետո պահանջվող փաստաթղթերի ցանկ		
Տեղեկանք ՀՀ ԿԱ Կադաստրի պետական կոմիտեի կողմից անշարժ գույքի գրավադրված կամ այլ տիպի արգելանքի տակ չլինելու մասին	✓	-
Գրավի իրավունքի գրանցման վկայագիր	✓	-
Սեփականության իրավունքի գրանցման վկայական	✓	-
Այլ փաստաթղթեր ըստ անհրաժեշտության	✓	✓

Եթե ինքնազբաղված է, ապա

- Հարկ վճարողի հարկային համարի պատճենը
- Անհատ ձեռներեցի կամ իրավաբանական անձի պետական գրանցման վկայագրի պատճենը
- Իրավաբանական անձի դեպքում կանոնադրության պատճենը
- Վերջին 1 տարվա ընթացքում (ամսական, եռամսյակային, տարեկան) հարկային մարմին ներկայացված ֆինանսական հաշվետվությունները՝ հաստատված համապատասխան հարկային մարմնի կողմից
- Նվազագույնը վերջին 6 ամիսների եկամուտների և ծախսերի գրառումները

Ուշադրություն

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Անվանական տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան է կազմում վարկի տարեկան տոկոսագումարը, որը հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ տարեկան կտրվածքով:

Տոկոսագումարի հաշվարկման օրինակ.

- վարկի սկզբնական գումար – 10,000,000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ -120 ամիս
- տարեկան տոկոսադրույք – 12%
- վարկի և տոկոսագումարների մարման եղանակ - անուիտետային

Ամսական մարումների մեծությունը կկազմի 143,471 ՀՀ դրամ

* Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի բանաձև.

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝
i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).
A – տրամադրվող վարկի սկզբնական գումարն է.
n –վարկի մարմանն ուղղված վճարի թիվը.
N -վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը.
Kn-վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը.
Dn-վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով.
i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ:
Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար կարող եք օգտվել Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման հաշվիչից http://www.armbusinessbank.am/am/page/Crediting հղումով:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ.
Անշարժ գույքի ձեռք բերման դեպքում.

- վարկի գումար – 25,000,000 ՀՀ դրամ
- վարկի ժամկետ – 240 ամիս
- Վարկի տոկոսադրույք- 12 %
- Վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար-100,000 ՀՀ դրամ
- Գրավի գնահատման հետ կապված ծախսեր-25,000 ՀՀ դրամ
- Նոտարական վճար՝ 25,000 ՀՀ դրամ
- Կադաստրային ձևակերպման հետ կապված բծախսեր՝ 72,000 ՀՀ դրամ
- Միասնական տեղեկանք՝ 10,000 ՀՀ դրամ
- Հրդեհից և այլ վտանգներից գույքի ապահովագրության հետ կապված ծախսեր՝ վարկի մնացորդային գումարի 0,15%
- Դժբախտ պատահարներից ապահովագրության հետ կապված ծախսեր՝ վարկի մնացորդային գումարի 0,15%
- վարկի և տոկոսագումարների մարման եղանակ – անուիտետային

Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է 12,9 %

Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակից:

Բանկը կարող է միակողմանիորեն փոփոխել պայմանագրով սահմանված տոկոսադրույքը՝ այդ մասին առնվազն 7 օրացուցային օր առաջ ծանուցելով Վարկառուին՝ վարկը նպատակային չօգտագործելու, ինչպես նաև վարկային պայմանագրով սահմանված պարտավորությունները չիրականացնելու դեպքում:

Ուշադրություն՝

Ձեր կողմից պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում վարկատուն 3 աշխատանքային օր հետո այդ տվյալները ոիղարկում է վարկային բյուրո, որտեղ ձեվավորվում է ձեր վարկային պատմությունը: դուք իրավունք ունեք վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել ձեր վարկային պատմությունը:

Ուշադրություն՝

Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ:

Ուշադրություն՝

Վարկառուն իրավունք ունի հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ իր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից եվ ապահովում է գաղտնիություն:

Ֆինանսական տեղեկատու՝ www.fininfo.am

Ուշադրություն՝

«Ձեր ֆինանսական տեղեկատուն» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է:

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն սպառողական վարկային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո, նախքան սպառողական վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ի»:

Բանկի վերաբերյալ տվյալներ.
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿե Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հասցե՝ 0010, ՀՀ, ք.Երևան,Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00,
ֆաքս՝ +37410 59 20 64
Ինտերնետային կայք՝ www.armbusinessbank.am, Էլ. Փոստ՝ info@armbusinessbank.am
Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն “Բանկերի և բանկային գործունեության մասին” ՀՀ օրենքի Գլուխ 4-ի:

Վարկային պատմության

և սքոր գնահատականի վերաբերյալ տեղեկատվություն

Վարկային պատմության էությունը

Վարկային պատմությունը հաճախորդի ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ամբողջությունն է, որը ցույց է տալիս վերջինիս ֆինանսական պարտավորությունների կամ դրանց կատարման պատմությունը: Վարկային պատմության մեջ ներառվում են հարցման պահին նախորդող 5 տարիների վերաբերյալ տվյալները, և այն ցույց է տալիս՝

- հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների չափի, տարեկան տոկոսադրույքի, պարտավորությունների մնացորդի, դրանց դիմաց գրավադրված գույքի վերաբերյալ տեղեկատվությունը:
- հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների գծով վճարների պատմությունը, ներառյալ սահմանված ժամանակացույցից վճարումների ուշացումները
- այլ անձանց տրված երաշխավորությունները
- հաճախորդին փոխկապակցված անձանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն

Վարկային պատմությունը չի պարունակում անձնական բնույթի տվյալներ:

Վարկային սքոր գնահատականի էությունը

Վարկային սքորը հաճախորդի սպասարկած պարտավորությունների վերաբերյալ հավաքագրված տեղեկատվության հիման վրա ձևավորված գնահատական է, որը ցույց է տալիս տվյալ հաճախորդի կողմից վարկի վերադարձելիության ռիսկն առաջիկա որոշակի ժամանակահատվածում:

Վարկային հարցման ազդեցությունը սքոր գնահատականի վրա

Կախված վարկային հարցման տեսակից՝ այն կարող է ազդել ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից կիրառվող սքորի տեսակների՝ ԱՔՌԱ սքոր և ՖԱՅԿՈ սքոր, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների կողմից կիրառվող սեփական սքոր գնահատականների վրա: Հարցումների նպատակների և վարկային սքոր գնահատականի վրա դրանց ազդեցության վերաբերյալ մանրամասները ներկայացված են ստորև աղյուսակում.

Վարկային հարցման նպատակ	Վարկային հարցման ենթանպատակ	Ազդեցությունը վարկային սքորի վրա
Նոր վարկային դիմում		Նվազեցնում է
Երաշխավոր անձ	Նոր վարկային դիմում	Նվազեցնում է
Փոխկապակցված անձ		Չի ազդում
Գործող վարկի մոնիտորինգ		Չի ազդում
Երաշխավոր անձ	- Գործող վարկ - Գործող երաշխավորի մոնիտորինգ	Չի ազդում
Այլ բանկային ծառայություններ		Չի ազդում

Վարկային պատմության և սքոր գնահատականի կարևորությունը

Վարկային պատմությունը և սքոր գնահատականը կարևոր են, քանի որ վարկի համար դիմելուց, բանկը կամ վարկային կազմակերպությունը, մինչև վարկ տրամադրելու որոշում կայացնելը, ուսումնասիրում է դիմումատուի վարկային պատմությունն ու գնահատում, թե որքանով է պատասխանատու վերջինս՝ որպես վարկառու:

Չհավորված «Վատ վարկային պատմությունը» կարող է հանդիսանալ ֆինանսավորման տրամադրման մերժման պատճառ:

Սխալ կամ թերի տվյալների շտկում

Եթե հաճախորդի վարկային պատմության մեջ առկա են սխալ կամ թերի տվյալներ, ապա պարզաբանման և ուղղման նպատակով հաճախորդը կարող է այդ մասին տեղեկացնել «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, այսուհետ՝ Վարկային բյուրո, կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվություն տրամադրող ֆինանսական կազմակերպություններին: Վարկային բյուրոյին տեղեկացումը կարող է իրականացվել համապատասխան գրավոր դիմում ներկայացնելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ առցանց ռեժիմում «Իմ ԱՔՌԱ» անձնական գրասենյակից:

Վարկային բյուրոյի կողմից տրամադրված վարկային զեկույցների վերաբերյալ հաճախորդների բողոքների ընդունման/ստացման, քննարկման և վերջիններիս արձագանքման գործընթացը, գործողությունների հաջորդականությունը սահմանվում է «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ «Վեճերի լուծման ընթացակարգ»-ով:

Վարկային պատմության և սքոր գնահատականի բարելավման քայլեր

Վարկային պատմությունը և սքոր գնահատականը բարելավելու համար անհրաժեշտ է նախ շտկել դրանք վատթարացնող հիմնական պատճառները, մասնավորապես՝ հարկավոր է առաջին իսկ հնարավորության դեպքում արագ մարել գործող ժամկետանց պարտավորությունները, ինչպես նաև՝

- մարումները կատարել սահմանված գրաֆիկին համապատասխան՝ բացառելով ուշացումները և ցուցաբերելով ճշտապահ վարքագիծ,
- նվազեցնել տրված երաշխավորությունները՝ կրճատելով դրանց քանակը, գումարը, ինչպես նաև առկայության դեպքում ապահովելով այս մասով ժամկետանց պարտավորությունների լրիվ մարումը,
- խուսափել անվստահելի անձանց համար երաշխավոր դառնալուց,
- թեթևացնել վարկային բեռը՝ մարելով գործող վարկերը՝ մասամբ կամ ամբողջությամբ,
- խուսափել հաճախակի նոր վարկերի ստացման համար դիմելուց:

Մանրամասները՝ abcfinance.am և acra.am հղումներում: